ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՌԱՋԻՆ ԱՏՅԱՆԻ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԻՐԱՎԱՍՈՒԹՅԱՆ ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

ՀԱՅՑԱԴԻՄՈՒՄԸ ՎԱՐՈՒՅԹ ԸՆԴՈՒՆԵԼՈՒ ԵՎ ԴԱՏԱԿԱՆ ԱԿՏԻ ՀՐԱՊԱՐԱԿՄԱՆ ՕՐ ՆՇԱՆԱԿԵԼՈՒ ՄԱՍԻՆ

15.09.2023թ. ք. Երևան

Հայաստանի Հանրապետության Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության քաղաքացիական դատարանի (այսուհետ նաև՝ Դատարան) դատավոր Ն. Հարությունյանս, քննության առնելով առնելով «Շինարար-97» ՍՊԸ (այսուհետ նաև՝ Հայցվոր) հայցադիմումն ընդդեմ «Հայաստանի հեռուստատեսային և ռադիոհաղորդիչ ցանց» ՓԲԸ (այսուհետ նաև՝ Պատասխանող)՝ պայմանագրի միակողմանի լուծումն անվավեր ճանաչելու և պայմանագրային իրավահարաբերությունները վերականգնելու պահանջների մասին, վարույթ ընդունելու հարցը,

Պ Ա Ր Զ Ե Ց Ի

Հայցվորի ներկայացուցիչ Աննա Գրիշայի Դավթյանը 16.08.2023 թվականին հայցադիմում է մուտքագրել Դատարան ընդդեմ Պատասխանողի՝ պայմանագրի միակողմանի լուծումն անվավեր ճանաչելու և պայմանագրային իրավահարաբերությունները վերականգնելու պահանջների մասին: Հայցադիմումը դատավորի աշխատակազմին է հանձնվել 17.08.2023թ.:

Դատարանի 21.08.2023 թվականի որոշմամբ հայցադիմումը վերադարձվել է: Որոշումը, հայցադիմումը և կից փաստաթղթերը հայցվորի ներկայացուցիչը ստացել է 04.09.2023թ.:

Հայցադիմումը կրկին ներկայացվել է 11.09.2023 թվականին (փոստային ծառայության է հանձնվել 06.09.2023թ.)՝ հայցադիմումի վերադարձման համար հիմք հանդիսացած թերությունները շտկված: Կրկին ներկայացված հայցադիմումը դատավորի աշխատակազմին է հանձնվել 12.09.2023 թվականին:

ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 234.6-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ դատարանը հայցադիմումը վարույթ ընդունելու հարցը լուծում է այն ներկայացվելուց հետո՝ եռօրյա ժամկետում:

ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 234.5-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ գնումների հետ կապված վեճերը քննվում և լուծվում են հայցադիմումը վարույթ ընդունելուց հետո՝ երեսուն օրվա ընթացքում: Դատարանի պատճառաբանված որոշմամբ սույն մասով նախատեսված ժամկետը կարող է երկարաձգվել մեկ անգամ՝ մինչև տասն օրացուցային օրով:

Քննության առնելով հայցադիմումը, ուսումնասիրելով կից ներկայացված փաստաթղթերը՝ Դատարանը գտնում է, որ ներկայացված հայցադիմումը համապատասխանում է ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի պահանջներին, առկա չեն հայցադիմումի ընդունումը մերժելու կամ հայցադիմումը վերադարձնելու հիմքեր:

Ղեկավարվելով ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 234.5-րդ, 234.6 -րդ հոդվածներով՝

ՈՐՈՇԵՑԻ

1. «Շինարար 97» ՍՊԸ հայցադիմումն ընդդեմ «Հայաստանի հեռուստատեսային և ռադիոհաղորդիչ ցանց» ՓԲԸ՝ պայմանագրի միակողմանի լուծումն անվավեր ճանաչելու և պայմանագրային իրավահարաբերությունները վերականգնելու պահանջների մասին, ընդունել վարույթ և համարել Դատարան ներկայացված այն սկզբնապես ներկայացնելու օրը:

2. Քաղաքացիական գործով եզրափակիչ դատական ակտը հրապարակել 2023 թվականի հոկտեմբերի 24-ին՝ դատական իշխանության պաշտոնական կայքում:

3. Որոշումն ուժի մեջ է մտնում կայացման պահից և ենթակա չէ բողոքարկման:

ԴԱՏԱՎՈՐ՝ Ն. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ